ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն ______________ «01» 09 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մ. Վանաձոր

խ. Աբովյանի անվան (թ. 9) հիմն. դպրոցի VI դաս.

ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Հեղինե Նարինեի Մելքոնյան

դասարանի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) 6-րդ դասարանում սովորում են 19 աշակերտ՝8 տղա և11 աղջիկ: Դասարանում կան գերազանց սովորող աշակերտներ:Դասարանում մեծ թիվ են կազմում ջանասիրաբար աշխատող աշակերտները,ովքեր ձգտում են գերազանցության:Աշակերտները հետևում են դպրոցի ներքին կարգապահական կանոններին:Միմյանց հետ հարաբերությունները նորմալ են,համախմբված են,հաճույքով մասնակցում են դպրոցական բոլոր միջոցառումներին,հաճախում են տարբեր խմբակներ: Իհարկե դասարանում կան նաև թույլ սովորող աշակերտներ,որոնց հետ տարվում են աշխատանքներ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնական տարվա ընթացքում հետևել աշակերտների ուսման առաջադիմությանը, հաճախումներին, հիգիենային, արտաքին տեսքին՝, աշակերտների կողմից դպրոցում կարգ ու կանոնի պահպանմանը:Ձևավորել համերաշխ կոլեկտիվ, դաստիարակել բազմակողմանի զարգացած անձնավորություններ:Անցկացնել անհատական զրույցներ աշակերտների հետ: Կազմակերպել ծնողական ժողովներ,կազմակերպել հաճախակի հանդիպումներ աշակերտների ծնողների հետ:

Տանել անհատական աշխատանքներ անբավարար վարք և անբավարար գնահատական ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ,որպեսզի շտկվեն թերությունները:

Կազմակերպել հետաքրքիր միջոցառումներ և էքսկուրսիաներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Կարևորել հայ առաքելական եկեղեցու դերը աշակերտների հոգևոր դաստիարակության գործում,նրանց հեռու պահել բոլոր տեսակի աղանդներից,ծանոթացնել հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներին, ընթերցել հատվածներ Աստվածաշնչից:Ամեն օր զրուցել հոգևոր արժեքների մասին,այցելել եկեղեցիներ:

3.2 Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ:Աշակերտների հետ պարբերաբար զրուցել անվանի նկարիչների, կոմպոզիտորների,պոետներիմասին,դիտել ֆիլմեր, լսել ազգային,դասական երաժշտություն: Այցելել թանգարաններ,ցուցահանդեսներ,թատրոններ և մշակութային վայրեր:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Աշակերտների մեջ զարգացնել հայրենասիրության գաղափարը՝կարևորելով բանակի դերը յուրաքանչյուր մարդու կյանքում:Աշակերտների հետ զրուցել ազգային հերոսների մասին,պատմել տարբեր ժամանակաշրջաններում հայոց բանակի և հայ զինվորների սխրագործությունների մասին, կարդալ պատմվածքներ և հուշեր:

3.4 Ֆիզիկական դաստիարակությունը իրականացնում է աշակերտների ֆիզիկական զարգացումը,առողջության ամրապնդումը,օրգնիզմի կոփումը,բարձր աշխատունակության բարձրացումը, դպրոցականների մեջ բարոյական բարձր հատկանիշների դաստիարակումը:Հետևել առողջ ապրելակերպին,մասնակցել բոլոր սպորտային միջոցառումներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Կարևորել աշխատասիրության դերը յուրաքանչյուր մարդու կյանքում, սովորեցնել սիրել աշխատանքը: Դպրոցում և դասարանում կատարվող աշխատանքներին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Աշակերտների հետ պարբերաբար զրուցել բնության կարևորության մասին ամբողջ աշխարհի համար, սերմանել սեր դեպի բնությունը,սովորեցնել պահապնել բնությունը,չաղտոտել շրջակա միջավայրը:Պարբերաբար զրուցել ներկայիս էկոլոգիական խնդիրների մասին, դիտել ֆիլմեր այդ թեմաներով:

4. Դպրոց-ընտանիք կապը Հրավիրել ծնողական ժողովներ, ամուր հիմքի վրա դնել ծնող-ուսուցիչ կապը, կատարել տարատեսակ աշխատանքներ ծնողխորհրդի հետ, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական և դաստիարակչական գործընթացների կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ

I	Գիտելիքի օր: Առաջին զանգի արարողություն Զրույց աշակերտների հետ Գիտելիքի օրվան նվիրված թեմայով:	01.09. - 02.09.2022	աշակերտներ դասղեկ
II	Զրույց <<Իմ տունը >> : Զրույցի ընթացքում աշակերտները ասացին ,թե ինչ է իրենց համար տունը, նկարագրեցին իրենց տունը:	05.09. - 09.09.2022	աշակերտներ դասղեկ
III	Զրույց <<Մեր ընտանիքը>>:Զրույցի ընթացքում աշակերտները սիրով պատմեցին իրենց ընտանիքների, ավանդույթների և սովորությունների մասին:	12.09. - 16.09.2022	աշակերտներ դասղեկ
IV	Զրույց <<Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը >> Աշակերտներին նախապես հանձնարարվել էր պատրաստվել զրույցին:Նրանք ներկայացրեցին զինանշանի, դրոշի,ինչպես նաև օրհներգի ստեղծման պատմությունները:	19.09. - 23.09.2022	աշակերտներ դասղեկ
V	Զրույց<< Մեր երկրի հերոսական անցյալը >> Դասղեկական ժամին հրավիրված պատմության ուսուցչուհի Ա. Գասպարյանը ներկայացրեց դրվագներ մեր երկրի հերոսական անցյալից, հերոսների մասին և այլն:	26.09-30.09.2023	աշակերտներ դասղեկ Ա. Գասպարյան
VI	Զրույց << Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր >> Աշակերտները պատմեցին այն մարդկանց մասին,ում հանդիպում են ամեն օր,ովքեր	03.10. - 07.10.2022	աշակերտներ դասղեկ

	նրանց սովորեցնում են ազնվություն, բարություն,կատարել բարի գործեր:		
VII	Զրույց<< Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը>> Նախապես պատրաստվելով թեմային՝ աշակերտները մեր հայրենիքից հետաքրքիր պատմություններ ներկայացրեցին :	10.10-14.10.2022	աշակերտներ դասղեկ
VIII	Զրույց<< Արցախյան հերոսամարտերը>> Պատմության ուսուցչուհի Ա. Գասպարյանը հետաքրքիր զրույց վարեց թեմայի վերաբերյալ:	17.10-21.10.2022	աշակերտներ դասղեկ Ա. Գասպարյան
IX	Զրույց<<Ազատամարտի հերոսները >> Պատմության ուսուցչուհի Ա. Գասպարյանը ներկայացրեց ազատամարտերի հերոսներից մի քանիսին, նրանց կենսագրությունը, կատարած սխրանքները:	31.10-04.11.2022	աշակերտներ դասղեկ Ա. Գասպարյան
X	Զրույց<< Մեր փոքրիկ բարեկամները>> Աշակերտները ասացին, որ իրենց փոքրիկ բարեկամներ են համարում կենդանիներին,և որ նրանց պետք է պաշտպանել, հոգ տանել, խնամել:	07.11-11.11.2022	աշակերտներ դասղեկ
XI	Զրույց<< Ինչ՞ է ընկերությունը և բարեկամությունը >> Զրույցի ընթացքում խոսվեց ընկերասիրության,ընկերության,բարեկամության մասին,բերեցին օրինակներ իրենց կյանքից;	14.11-18.11.2022	աշակերտներ դասղեկ

XII	Զրույց<< Ով՞ է իմ ընկերը>> Զրույցի ընթացքում աշակերտները ներկայացրեցին իրենց մոտ ընկերներին, նրանց լավ և վատ կողմերին, իրենց միջև եղած հարաբերությունները:	21.11-25.11.2022	աշակերտներ դասղեկ
XIII	Զրույց << Ինչ՞ է ազնվությունը >> Աշակերտները խոսեցին ազնվության մասին, արտահայտեցին իրենց կարծիքներն ու տեսակետերը:	28.11-02.12.2022	աշակերտներ դասղեկ
XIV	Զրույց << Ժպիտը մարդու կյանքում >> Զրույցի ընթացքում աշակերտները ասացին, որ ժպիտը մարդկանց պարգևում է երջանկություն,ուրախություն, օգնում է հաղթահարել դժվարությունները:	05.12-09.12.2022	աշակերտներ դասղեկ
XV	Զրույց<< Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է,թե՝ վատ >> Աշակերտները արտահայտեցին իրենց կարծիքները, տեսակետերը:	12.12-16.12.2022	աշակերտներ դասղեկ
XVI	Առաջին կիսամյակի առաջադիմության և վարքի ամփոփում Ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի առաջին կիսամյակի գնահատականները, խոսվեց նրանց վարքի , ձեռքբերումների և թերացումների,ինչպես նաև երկրորդ կիսամյակում կատարվելիք աշխատանքների մասին:	19.12-23.12.2022	աշակերտներ դասղեկ
XVII	Զրույց << Երկիր,որտեղ կուզեի ապրել >> Յուրաքանչյուր աշակերտ ներկայացրեց այն երկիրը, որտեղ կցանկանային ապրել և ինչու:	09.01-13.01.2023	աշակերտներ դասղեկ

XVIII	Զրույց << Ինչո՞վ կարելի է հպարտանալ՝ խոսելով Հայաստանի մասին >> Աշակերտները ասացին,որ կարելի է Հայաստանով հպարտանալ նրա տեսարժան վայրերով, հարուստ մշակույթով, մարդկանցով:	16.01 - 20.01.2023	աշակերտներ դասղեկ
XIX	Զրույց << Իմ իրավունքներն ու պարտականությունները >> Զրույցի ընթացքում ներկայացվեցին աշակերտների իրավունքներն ու պարտականությունները,որոնց նրանք պետք է հետևեն:	23.01-27.01.2023	աշակերտներ դասղեկ
XX	Զրույց << Ինչ՞ է պատասխանատվության զգացումը >> Զրուցեցին թեմայի շուրջ,և աշակերտները եկան այն եզրկացության, որ ամեն մարդ պետք է պատասխանատու լինի իր արարքների և արածների համար:	30.01-03.02.2023	աշակերտներ դասղեկ
XXI	Զրույց << Համբերություն և համբերատարություն>> Զրուցեցին թեմայի շուրջ՝ նշելով,որ զանազան բարդ իրավիճակներից կարելի է դուրս գալ ունենալով ծով համբերություն:	06.02-10.02.2023	աշակերտներ դասղեկ
XXII	Զրույց << Վատ սովորություններ, ինչպե՞ս պայքարել դրանց դեմ >> Զրույցի ընթացքում աշակերտները նախ նշեցին, թե որոնք են վնասակար սովորությունները,հետո նշեցին դրանց	13.02 - 17.02.2023	աշակերտներ դասղեկ

	դեմ պայքարելու և դրանցից ազատվելու միջոցները:		
XXIII	Զրույց <<Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին >> Զրույցի ընթացքում զրուցեցին իսկական ընկերության մասին, պատմեցին իրենց մտերիմ ընկերների մասին:	20.02-24.02.2023	աշակերտներ դասղեկ
XXIV	Զրույց <<Դժվարություններ,որոնց բախվում եմ սովորելու ժամանակ >> Աշակերտները ներկայացրեցին այն բոլոր դժվարությունները,որոնք ունեն դասերը սովորելիս: Խոսեցին նաև դրանք հաղթահարելու միջոցների մասին:	27.02-03.03.2023	աշակերտներ դասղեկ
XXV	Զրույց << Ինչպե՞ս կյանքում հասնել հաջողության >> Աշակերտներ նշեցին,որ կյանքում հաջողության հասնելու համար պետք է լինել նպատակասլաց,աշխատասեր,բանիմաց, համբերատար, ինչպես նաև ունենալ ճիշտ կողմնորոշվելու ունակություններ:	06.03-10.03.2023	աշակերտներ դասղեկ
XXVI	Զրույց << Իմ կատարած լավ գործերը >> Յուրաքանչյուր աշակերտ ներկայացրեց իր կատարած լավ գործերը,և ասացին, որ կշարունակեն կատարել բարի գործեր:	13.03 - 17.03.2023	աշակերտներ դասղեկ
XXVII	Զրույց << Ու՞մ եմ համարում գեղեցիկ մարդ >>	20.03-24.03.2023	աշակերտներ

	Որոշ աշակերտներ ասացին, որ գեղեցիկ են համարում գեղեցիկ արտաքին ունեցող մարդկանց: Ոմանք էլ ասացին, որ արտաքին գեղեցկությունը կարևոր չէ,կարևորը մարդու ներքին է և նրա կատարած բարի գործերը:		դասղեկ
XXVIII	Զրույց << Եթե ես կարողանայի… >>	03.04-07.04.2023	աշակերտներ դասղեկ
XXIX	Զրույց << Ինչպես հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները>>	10.04-14.04.2023	աշակերտներ դասղեկ
XXX	Զրույց << Ինչ՞ է նշանակում լինել քաղաքակիրթ >>	17.04-21.04.2023	աշակերտներ դասղեկ
XXXI	Զրույց << Գրքերը մեր կյանքում >>	24.04-28.04.2023	աշակերտներ դասղեկ
XXXII	Զրույց << Համակարգչի լավ ու վատ կողմերը>>	01.05-05.05.2023	աշակերտներ դասղեկ
XXXIII	Զրույց << Քանի լեզու գիտես այնքան մարդ ես>>	08.05-12.05.2023	աշակերտներ դասղեկ
XXXIV	Երկրորդ կիսամյակի առաջադիմության և վարքի ամփոփում Ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի երկրորդ կիսամյակի գնահատականները,	15.05-19.05.2023	աշակերտներ դասղեկ

	խոսվեց նրանց վարքի , ձեռքբերումների և թերացումների մասին:		